ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԱՎԱՐԲԵԿՅԱՆԻ
(1875—1961)

Ապրիլի 24-ին, Օրջոնիկիձե քաղաքում, կարճատև հիվանդությունից հետո, վախճանվեց արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանա Տավարբեկյանը։

Հանգուցյալը ծնվել է 1875 թվականին Ղզլար քաղաքում (այժմ Կրոզնի շրջան) և նախնական կրթությունն ստացել տեղի դպրոցում, ապա ուսումը շարունակել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և այն ավարտել 1894 թվականին։ Այնուհետև ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը և այն ավարտել 1897 թվականին, որից հետո զբաղվել է ուսուցչությամբ։

1905 թվականին քահանա է ձեռնադրվել Ղզլարում և ապա քահանայագործել Օրջոնիկիձեում։

Հանգուցյալը զարգացած, պարտաճանաչ քահանա էր։ Նա իր քահանայական օգտակար ծառայության համար արժանացել էր ավագ քահանայության պատվին և քահանայական լանջախաչ կրելու իրավունքին։

Հանգի՜ստ նրա ոսկորներին։